

պուրզ տեղեկացուած էին եւ զրգուած ռուսական կառավարութեան բուռն կասկածները:

«Ճօհանաս Հանուէյ, այդ ատենները գործակիցը մայրաքաղաքին մէջ հաստատուած առևտրական տան մը, ատոր վրայ իր գործատէրերէն զրկուեցաւ՝ կացութեան մասին տեղեկութիւն ստանալու համար: 1743-ին, երբ ան Պարսկաստան ժամանեց, արագ կերպով վերահասու եղաւ կացութեան: Պալատական թոյլտուութիւնները ապահովութիւն չէին առևտրական բարեկամութեանց համար: Ան ամէն տեղ ռուս պաշտօնեաները եւ առևտրականները նախանձոտ եւ թշնամի դտաւ: Մտադիր ըլլալով անկախ ձեռնարկ ընելու, Հանուէյ անմիջապէս սկսաւ էլթընի սկզբնական ծրագիրը հետապնդել՝ ջանալով բանալ Աստարապատէն Մէշէտ ճանապարհը: Աստարապատի մէջ, սակայն, ան տեղական ապստամբութեան հանդիպեցաւ, եւ իր կարաւանը, որ ճամբայ ելլալու վրայ էր, բռնուեցաւ եւ իր ապրանքին մեծ մասը զբաւուեցաւ, իսկ ինքը հազիւ կրցաւ ազատիլ թիւրքմէշներու զերութեան մատնուելէն: Վերջապէս, ազատելով, Մազանտէրանի եւ Կիլանի վրայով վերադարձաւ Ղաղուին, եւ անկէ ճամբայ ելաւ դէպի Համատան, ուր գտաւ Նատիր Շահը բանակատեղեակ եւ անկէ ստացաւ իր կողոպտեալ ապրանքներու վերստացման հրամանագիրը: Էլթընի հետ վէճէ մը վերջ, որուն նաւատիրական քսութեանց դէմ միշտ բողոքած էր, մեկնեցաւ Պարսկաստանէն 1744 սեպտեմբերին հում մետաքսի բեռով եւ վերադարձաւ Ս. Պետերբուրգ, ուր ան բնակեցաւ յաջորդ հինգ տարիները:

«Պարսկաստան մնացած Ռուսիոյ Ընկերութեան մնացեալ գործակալներէն Վան Միլոսով գնաց Մէշատ եւ հոն բնակեցաւ երկու տարիէ աւելի, սակայն առանց յաջողութիւն գտնալու: Կրահամ սպաննուեցաւ Սէմանի մէջ: 15 Ներսիսի աշխատողներէն հինգը մեռան Ղաղուինի մէջ 1740-44-ին: Ռէշտ բնակողները անկոր մնացին ջերմի եւ այլ հիւանդութեանց դէմ: Տեղույն Ռուսական հիւպատոս, Բակունին, մասնաւորաբար թշնամի էր: Ոչ ալ էլթընի գործերակերպը աւելի խոստմնալից կ'ը-

նէր ապագան: Ռուսերը լըջօրէն դայրացած էին Նատիր Շահի ծովային ցոյցերէն: Ռուսական Առևտրական Գօլըճը հրամայեց թոյլ չտալ, որ ռեւէ ապրանք, Մր. էլթընի զրկուելէք, անցնի Ռուսական Կայսրութեան մէջէն: Ասոր վրայ՝ Լոնտոնի Ռուսական Ընկերութիւնը, մեծապէս վախցած, որոշեց յետս կոչել էլթընը՝ անոր թոյլ տալով 400 անգլ. ոսկիի տարեկան վճարում մը, եւ որոշեց իրենց գործը միացնել Հանուէյինին հետ: Սակայն, էլթըն այս ամէնը աւրեց՝ բացարձակապէս մերժելով վերադառնալ: Ան Նատիր Շահէն (1745 նոյեմբերին) հրամանագիր մը հանեց, որով իրեն կ'արգիլուէր երկրէն (Պարսկաստանէն) մեկնիլ:

«Կացութիւնը վատէն վատթարացաւ: Ռուսերու բողոքներուն եւ հետապնդումներուն վրայ, երկու բրիտանական նաւերը ստիպմամբ առնուեցան Աստրախանի Ռուս վաճառականներուն համար եւ ասկէ վերջ նաւեցին Ռուսական դրօշին տակ: 1746 նոյեմբերին Ռուսաց Կայսրուհին հրամանագրով մը բոլորովին արգիլեց Կասպից Բրիտանական առևտուրը: Վերապրող Անգլիացի գործակալները ժամանակի մը համար մնացին՝ վերստին տիրանալու պարագայ յոյսով: Սակայն, 1747 յունիսին, Նատիր Շահի սպանութենէն վերջ, 80,000 անգլիական ոսկիի ապրանքը կողոպտուեցաւ, եւ յաջորդող անիշխանութեան մէջ անգլիացիք առիթ չտեսան վերստին տիրանալու իրենց ապրանքին կամ դիրքին: Ըստ այսմ 1748-ին եւ 1749-ին քաշուեցան: Եւ այսպէս, Կասպից Ծովի ճամբան դէպի Պարսկաստան բանալու երկրորդ ու վերջին վճռական փորձերը Անգլիոյ կողմէն նոյնքան թշուառօրէն փճացան, ինչպէս որ եղած էր նախորդը: Չեռնարկին ողբալի վերջաւորութեան համաձայն, էլթըն, որ այնքան խոշոր կերպով պատասխանատու էր աղէտին համար, ինքն ալ երեք տարի վերջ բուռն մահով մը չբացաւ»: 3)

Քըրքըն, իրր միտթարանք, իր մեծարժէք

3) Persia and the Persian Question.— London, 1892, Vol. II, էջ 542-543: